

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶ**

ԲԼԱԳՈՂԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔ

**2017-2021թթ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ Բլագողարնոյե համայնքի ավագանու
2016թ. 21-րդ դեկտեմբերի թիվ 36-Ն որոշմամբ

ԲԼԱԳՈՂԱՐՆՈՅԵ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսք.....
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....
 - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....
 - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....
 - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....
 - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները.....
 - 2.5. Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....
 - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՄ) վերլուծություն.....
3. Նպատակների սահմանվում և գործողությունների պլանավորում.....
 - 3.1. Համայնքի զարգացման տեսլական.....
 - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....
5. ՀՀԶԾ մոնիտորինգ.....

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Բլագոդարնոյե համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բլագոդարնոյե համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- ա/ Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- բ/ Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- գ/ Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- դ/ Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- ե/ Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները

➤ Համայնքում առկա հիմնախնդիրները

-Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /30%-40%/

- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության / նոր ջրագծի կառուցում/
- գազաֆիքացում
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների կառուցում, ասֆալտապատում, փողոցների ընթացիկ վերանորոգում

➤ **Լուծման ուղիները**

- Օրենքների փոփոխություններ
- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Հանարային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ օրենսդրական ակտերով:

Այն մշակվում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, ավագանու, բնակչության, հանձնաժողովների կողմից արված առաջարկությունների և քննարկումների հիման վրա, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրությունը

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Բլագոդարնոյե՝ գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, Տաշիրի տարածաշրջանում, Սևաբերդ գետակի ձախ ափին, Տաշիր քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից 62 հեռավորության վրա: Գյուղի մակերեսը կազմում է 11,77 քառ.կմ, ԲԾՄ-ն 1615 մ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բուսաբուծությամբ:

Գյուղը հիմնադրվել է 1907-1908 թվականներին Կիրիլ անունով մոլոկանի կողմից և այն անվանվել է Կիրիլովկա: Հետագայում գյուղը անվանել են Բլագոդարնոյե: Սկզբնական շրջանում գյուղը եղել է ռուսաբնակ, այնուհետև խորհրդային միության տարիներին գյուղ են եկել ադրբեջանցիները, որոնք Արցախյան շարժման ժամանակ 1988 թվականին հեռացել են գյուղից: Ներկայումս գյուղը ամբողջությամբ բնակեցված է հայերով:

Ունի հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց

Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով:

Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 256,որից մշտական՝ 220:

Համայնքի բնակչության 30%-40%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ համայնքում ցածր է գյուղմթերքի արտադրանքի սպառումը, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է անասնապահությունից:

Համայնքի հողատարածքը

	<i>ՀՀ Լոռու մարզի Բլազոդարնոյե համայնքի հիմնական հողային ռեսուսները</i>	հա
1.	<i>Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝</i>	3615,6
2.	<i>Բնակավայրի հողեր</i>	29.66
3.	<i>Գյուղատնտեսական նշանակության հողեր</i>	3465.67
4.	<i>Անտառային հողեր</i>	82.88
5.	<i>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր</i>	10.41
6.	<i>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր</i>	5.24
7.	<i>Հատուկ պահպանվող տարածքների հողեր</i>	3.06
8.	<i>Ջրային հողեր</i>	16.50

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<i>1. Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը</i>	223
<i>. տղամարդ</i>	107
<i>. կին</i>	116
<i>. նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան)</i>	31
<i>. դպրոցական տարիքի (7-17 տարեկան)</i>	44
<i>. միջին տարիքի (18-62 տարեկան)</i>	126
<i>. 63 տարեկանից բարձր</i>	22
<i>. ընտանիքների թիվը</i>	61
<i>. գրանցված ընտրողների թիվը</i>	181

Բնակչության սոցիալական կազմը

<i>1. Կենսաթոշակատուներ, որոնցից՝</i>	25
<i> հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)</i>	14
<i> միակողմանի ծնողազուրկ երեխաներ</i>	1
<i> երկկողմանի ծնողազուրկ երեխաներ</i>	-
<i> մանկուց հաշմանդամ երեխաներ</i>	1
<i> միայնակ կենսաթոշակատուներ</i>	2
<i> Չոհված ազատամարտիկների երեխաներ</i>	1
<i>2. Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից՝</i>	-

	ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	-
3.	Փախստականներ (մարդ)	9
4.	Բռնադատվածներ	1
5.	Բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)	7
6.	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը (միջինը), այդ թվում՝	18
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը		16
Միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը (միջինը)		2

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 128 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 28 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 7895.3 հազ դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2995.3 հազ դրամ (38%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ, հազ.
ԱԶ	2	2000.0
Խանութներ	1	900.0

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	5,49հա	250g
բանջարեղեն	0,61հա	57,9g

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	607
Այդ թվում կովեր	350
Մանր եղջերավոր անասուններ	885
Այդ թվում մայրեր	454
խոզեր	130
Այդ թվում մայրեր	10

թռչուններ	200
Այդ թվում հավեր	150
մեղվարնտանիքներ	74

- Համայնքում գործում է հիմնական դպրոց, որտեղ սովորում են 45 աշակերտ:

Դպրոցն ունի 21 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժկետ:
Բուժկետում աշխատում է 1 աշխատող :
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 18 ընտանիքներ:

2.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

- Խմելու ջրի մատչելիության անբավարար մակարդակ
- Համայնքը մարզկենտրոնի ու մոտակա այլ քաղաքների հետ կապող ճանապարհների անբավարար վիճակ
- Առողջապահական ծառայությունների անբավարար մատչելիություն
- Հանրակրթության անբավարար մատչելիություն և վիճակ (դպրոցական գույք, շենք, դասագրքեր, մասնագետ-ուսուցիչներ, հեռավորություն և այլն)
- Մասնագիտական կրթություն ստանալու կամ վերապատրաստում ու վերաորակավորում անցնելու սահմանափակ հնարավորություններ
- Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը և գազաֆիքացումը:

ԾՐԱԳԻՐ 1

Բլագոդարնոյե համայնքում գյուղատնտեսության զարգացումը խթանելու նպատակով կիրականացվի «Գազատարի ցանցի կառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կառուցված գազատար

2. Կառուցված գազատարի ներքին ցանց

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 7կմ երկարության համար գազախողովակներ:

1.2. Կաթնառատ-Բլագոդարնոյե գազուղու միացում:

1.3. Խողովակաշարն անցկացնել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել գազատար 2 կմ երկարության համար խողովակներ, էլեկտրոդ և փականներով բաժանարարներ գազատարի ներքին ցանցի համար:

2.2. Խողովակները միացնել:

- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը:

- Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը:

- Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բոլոր բնակիչները և հարևան Նորամուտ և Մեղրահովիտ համայնքների 240 բնակիչները:

- Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

- Ծրագրի համառոտ նկարագրություն.

- Ստանալ Կաթնատառի գազատարից գազ վերցնելու թույլտվություն: Կատարել չափազորում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն:
2.Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:
- Համայնքում ներկայումս շարունակում է մնալ չգազաֆիկացված համայնքների ցուցակում: Ծրագրի իրականացումը կապահովի համայնքաբնակներին ընձեռնելով բնական գազից օգտվելու հնարավորություններից, ավելացնել գյուղատնտեսության ծավալները, բարելավել համայնքի բնակիչների ապրելակերպը:
- Ծրագրի բյուջեն կազմում է՝
- Ընթացիկ ծախսեր՝ 20մլն դրամ
- Կապիտալ ծախսեր՝ 45մլն դրամ
- Ընդհանուր բյուջեն՝ 65մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Բլագոդարնոյե համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրմուղ-կոյուղու կառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կառուցված երկրորդ ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում

2.Կառուցված ջրմուղ-կոյուղի

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել խողովակներ 7կմ-ի համար, էլեկտրոդ և 60 հատ փականով բաժանարարներ:

1.2. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.4. Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:

1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիկենտրոնի օգնությամբ:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել ազրոխողովակներ 2.5կմ-ի համար, ջրհորի մետաղյա կափարիչներ, ցեմենտ և փականներ ջրմուղ կոյուղու համար:

2.2. Խողովակները միացնել:

2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի կոյուղագիծ:

- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը:

-Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը:

-Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բոլոր բնակիչները:

-Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

-Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

1. Կատարել չափագրում:

2. Կազմել պլանային նախագիծ և բյուջե:

3. Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը:

4. Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:

5. Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում:

6. Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:

7. Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի և շահառուներն օգտվում են դրսի սան-հանգույցներից:

8. Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց:

9. Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կգարգանա:

-Ծրագրի բյուջեն կազմում է՝

1. Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ

2. Կապիտալ ծախսեր՝ 20մլն դրամ

3. Ընդհանուր բյուջեն՝ 23մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Բլագոդարնոյե համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «Ճանապարհների բարեկարգում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում 600մ:

1.2. Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում 400մ:

1.3. Հեղեղատարներ կառուցել 100մ:

1.4. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել 300մ:

1.5. Կատարել ճանապարհների կահավորում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային ավելացվեն գոնե մեկով:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղին ավելացվեն գոնե մեկով: Այժմ միջհամայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն: Համայնքի 30 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթնեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է՝
 Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ
 Կապիտալ ծախսեր՝ 9մլն դրամ
 Ընդհանուր բյուջեն՝ 14մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

- Բլագոդարնոյե համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի զարգացման նպատակով կիրականացվի **«Մշակույթի տան կահավորում և գործարկում»** ծրագիրը:
- Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների մարզամշակույթային կյանքի ակտիվացման ապահովումը:
- Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝
 1. Կահավորված և ջեռուցվող մարզադահլիճ
 2. Մարզագույքով ապահովված մարզադահլիճ
- Ծրագրի հիմնական գործողություններն են՝
 - 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
 - Ձեռք բերել մարզադահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք:
 - 1.2. Ջեռուցման համակարգ ձեռք բերել:
 - 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
 - Ձեռք բերել տարբեր մարզաձևերի համար նախատեսված մարզագույք մարզադահլիճի համար:
- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը:
- Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը:
- Ծրագրի հիմնական շահառուներն են համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.:
- Ծրագրի համառոտ նկարագրությունը՝
 1. Կատարել չափագրում:

2.Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:

- Այժմ համայնքի երիտասարդները գուրկ են մարզվելու հնարավորությունից: Ծրագրի իրականացումից հետո համայնքի երիտասարդները կմասնակցեն մարզամշակույթային, սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով:
- Ծրագրի բյուջեն կազմում է՝
 - 1.Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ
 - 2.Կապիտալ ծախսեր՝ 3.5մլն դրամ
 - 3.Ընդհանուր բյուջեն՝ 5.5մլն դրամ:

2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	7.9 մլն	8.0 մլն	8.5 մլն	9.2 մլն	9.7մլն
Ա	Հարկային եկամուտներ	2.9 մլն	2.5 մլն	2.6 մլն	2.6մլն	2.6 մլն
1	Հողի հարկ	2.4 մլն	1.9մլն	1.9 մլն	1.9 մլն	1.9 մլն
2	Գույքահարկ	5.6 հազ	6.0 հազ	6.2 հազ	7.0 հազ	7.0մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր	12 հազ	50 հազ	55 հազ	100 հազ	100հազ
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	12.0 հազ	50.0 հազ	55.0 հազ	100 հազ	100 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ	1.4 մլն	1.5 մլն	1.8 մլն	2.0 մլն	2.0մլն
1	Վարձավճարներ	1,4 մլն	1.5 մլն	1.8 մլն	2.0 մլն	2.0 մլն
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	3.5մլն	4.0մլն	4.0մլն	4.5 մլն	5.0մլն
Դ	Դոտացիա	3.5մլն	4.0 մլն	4.0 մլն	4.5 մլն	5.0 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

- Համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝
- Համայնքի բնակչության 30%-40%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.
- Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
 2. Բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը, ֆինանսի բացակայությունը
 4. Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝
 5. Ֆինանսական ուղությունը,
- Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի
 1. կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝
 2. մշակութային կյանքի պասիվությունՀամայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝
 1. խմելու ջրի անորակությունը/մանրէազերծման, ֆիլտրման բացակայությունը/,
 2. գազաֆիքացման բացակայությունը
- Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,
- Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ 1. համայնքաբնակների աղքատությունը, բնակչության արտահոսքը
- Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. ջրմուղ-կոյուղու բացակայությունը,
 2. խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,
 3. միջոցների սղությունը
- Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը,
 1. համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝
 2. միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,
 3. հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

4. Ճանապարհային նշանների բացակայությունը

- Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
 2. սեյսմիկ գոտում գտնվելը,
- Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. սպառման շուկայի դժվար հասանելիությունը,
 2. գլխավոր մայրուղուց հեռու լինելը:
- Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝
- աղբահեռացում չկազմակերպելը,
- Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. գործարար միջավայրի բացակայությունը,

2. ձեռնարկությունների բացակայությունը, 3. երիտասարդների միգրացիան

- Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. երիտասարդների չամուսնանալը,
 2. երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
 3. պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը
- Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը
- Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,
- Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 1. համայնքի երիտասարդների կամավորության պակասը,
 2. հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,
 3. տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

- գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,
- գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները
- գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
<p>. ՅՈՒՆԵՍԿՈՒՆ» . խոտհարքները . Հեռահաղորդակցության առկայություն . Բանիմաց աշխատուժի առկայություն . Հիմնական դպրոցի առկայություն. Բուժկետի առկայություն</p>	<p>. Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ . Կենտրոնացված կոյուղու բացակայություն . Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ . Ֆինանսական ռեսուրսների բացակայություն . Ծնելիության նվազում . Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ . Թերզբաղվածության բարձր մակարդակ . Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ . Տրանսպորտային ցանցի բացակայություն . ԱճՕ.Ն»ԷՄՇԻՍՇ մՅՅԻՍԱճՁԱճՅ . զազաֆիկացման բացակայումը</p>
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>. արոտավայրերի առկայություն . խոտհարքների առկայություն . ջրի պաշարի առկայություն . Պետական ծրագրերի մեջ ընդգրկվածություն . Կոոպերատիվների ստեղծում</p>	<p>. Տարերային աղետների վտանգ . Գյուղ. մթերքների գների նվազում . Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն . Սպառման շուկաների դժվար հասանելիություն . Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն . Խիստ կլիմա /ցրտահարություն/ . Երաշտ . Կարկուտ</p>

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

ՀՀԶԾ իրականացման արդյունքում համայնքում հինգ տարիների ընթացքում հետևյալ փոփոխություններ են տեղի ունենալու

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Չարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
 - Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը
 - Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
 - Դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
 - Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- Համայնքի գույքը կառավարել:
- նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական

մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

- Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նկատմամբ իրականացված մոնիթորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների: